ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1918-1920թթ.

Անկախության առաջին ամիսներին Հայաստանը ավելի շուտ գաղթականական կայան էր հիշեցնում: 1918թ. վերջին թուրքերի հեռանալուց հետո գաղթականությունը սկսեց տարերայնորեն շարժվել իրենց նախկին բնակավայրերը: Էջմիածնում և Դարաքիլիսայում բազմաթիվ գաղթականներ կուտակվեցվին, ընդ որում հենց միայն Էջմիածնում՝ 140000 հոգի[1]: Հատկապես շատ անհամբեր էին սուրմալեցիները, դամարլեցիները և սարդարապատցիները: Կառավարությունը ճիգ էր գործադրում կազմակերպված ձև տալու այս գործընթացին, սակայն լիակատար հաջողություն ապահովելը դժվար էր: 1919թ. մայիսի վերջին թուրքերի թողած բոլոր տարածքները՝ Շիրակը, Կարսը, Սուրմալուն, Վեդին, Նախիջևանը բնակեցված էր վերադարձած հայերով:

1918թ. վերջին թուրքերի հեռանալուց հետո մուսուլման բնակչության մի զգալի մասը հեռացավ իր բնակավայրերից՝ վախենալով հայերի արդարացի պատժից այն օժանդակության համար, որ իրենք ցույց էին տվել թուրքերին նրանց օկուպացիայի ընթացքում: Հեռացած մուսուլմանների թիվը, ըստ գավառների, մոտավորապես կազմում էր. Էջմիածնից՝ 25000 հոգի, Երևանից՝ 25000 հոգի, Սուրմալուից՝ 18340 հոգի, Ալեքսանդրապոլից՝ 1500 հոգի, Դարաքիլիսայից՝ 8000 հոգի, Դարալագյազից՝ 23000 հոգի, Նոր Բայազետից՝ 13800 հոգի: Ընդհանուր թիվը կազմում էր մոտ 115000 հոգի[2]: Հետագայում, համոզվելով հայերի բարյացակամ վերաբերմունքի մեջ, նրանք սկսեցին վերադառնալ: 1919թ. մարտի 11-ի դրությամբ Հայաստան էր վերադարձել մոտ 29000 մուսուլման[3]: Չնայած գյուղերի մեծամասնությունում տեղավորվել էին հայ գաղթականները կամ վարձակալության էր տրված անհատ անձանց, այնուամենայնիվ Հայաստանի իշխանություններն ամեն միջոց ձեռնարկում էին նրանց տեղավորելու համար: 1919թ. ապրիլի 2-ին կառավարությունը որոշում է ընդունում նախկին մուսուլմանաբնակ գյուղերն իրենց վերադարձող տերերին հետ տալու մասին. թեկուզ և «..... գանձարանը դրամական կորուստներ ունենա»:

Ավելին, որոշվեց որ «..... մինչև հողային օրենքի ընդունումը ճանաչվում է թուրք կալվածատերերի իրավունքն իրենց հողերի նկատմամբ»[4]: Նույն թվականի մայիս ամսին ՆԳ նախարարի պաշտոնակատար Ս. Մանասյանը կարգադրում է . «..... այն մուսուլմանական գյուղերում, հիմա զբաղեցրած հայ

փախստականներին, ուր վերջիններս տասը ծխից ավել չեն, անհապաղորեն տեղափոխել որևէ այլ նույնպիսի քիչ հայ փախստականներով բնակեցված գյուղեր: Նրանց ազատած գյուղերը հանձնել միայն վերադարձող թաթարներին»: Միայն ռազմավարական անվտանգության առումով արգելվում էր մուսուլմաններին բնակվել երկաթգծի և կարևոր մայրուղիների մերձակայքում[5]: Մինչև ամառ իրենց բնակավայրերը վերադարձան Զանգիբասարի, Դարալագյազի, Վեդիբասարի, Սուրմալուի, Սարդարապատի, Թալինի, Ղամարլուի մուսուլմանների մեծամասնությունը: Կառավարությունը միայն բացառիկ դեպքերում էր մերժում վերադարձի խնդրանքները: Ապրիլի 2-ին մերժվեց Հաջի Մուխանի, Աղզիբիրի և միլիդարացիների վերադարձը: Չնայած դրան՝ հետագայում միլիդարացիները վերադարձան: Այդ հարցում հավանաբար միջնորդել են անգլիացիները: Ռ. Տեր-Մինասյանը նշում է նման մի միջնորդության մասին՝ հոգուտ Զղինի թաթարների և հավանական է, որ Միլիդարայի համար նույնպես նման միջնորդություն եղել է[6]:

Մուսուլմանների վերադարձը շարունակվեց մինչև 1919 թ. ամառը, երբ, ի պատասխան հայերի բարյացակամության, նրանք պատասխանեցին իրենց յուրահատուկ երախտամոռությամբ և երկրի տարբեր անկյուններում խռովություններ բարձրացրին: Մինչև այս դեպքերը վերադարձածների թիվը ըստ մեր հաշվարկի պակաս չէր 50000-ից: Խռովությունների պատճառով բնակչությամբ մեծ տեղաշարժեր եղան: Նախիջևանում ընդամենը երկու ամիս առաջ վերահաստատված հայերը կրկին բռնեցին գաղթի ճամփան: Փրկվածների մեծ մասն էլ՝ մոտ 7000 հոգի, անցան Դարալագյազ, մի մասն էլ կենտրոնացավ Գողթնի լեռնային գյուղերում: Եղան նաև Պարսկաստան անցնողներ[7]: Շարուրից նահանջող հայկական ուժերը և բնակչության մի մասը անցան Դավալու, իսկ մի քանի օրից, վերցնելով նաև այստեղի մոտ 6000 հոգի հայերին, նահանջեցին Ղամարլու:

Սուրմալուլում ծագած խռովությունների պատճառով Կողբի տարածքից գաղթեցին մոտ 5000 հոգի հայ և եզդի բնակչություն[8]:

Կառավարությունը կարողացավ ճնշել մի քանի խռովարար շրջանների, որոնց բնակչությունը հեռացավ այդ տարածքներից: Ամբողջովին հեռացան Թալինի, Բասարգեչարի, մասամբ Ղամարլուի, Դարալագյազի մուսուլմանները:

Դեկտեմբերի կեսերին Զանգեզուրում ճնշվեցին բոլոր մուսուլմանական գյուղերի խռովությունները, որոնց բնակչության մի մասը հեռացավ Նախիջևան, մի մասն էլ՝ Ադրբեջան: Այնուամենայնիվ 1919թ. վերջին մուսուլմանական բնակավայրերի մեծամասնությունը չէր ենթարկվում կառավարությանը: Համաձայն 1919թ. վիճակագրության՝ բնակիչ ունեցող մուսուլմանական

651 գյուղից 401-ը չէր վիճակագրվել: Մեծամասամբ դրանք խռովարար գյուղեր էին: Այս թվի մեջ հաշվված չէ Նախիջևանի նահանգը:

1919-1920թթ. ծմռանը հնազանդեցվեցին Սարդարապատի և Աշտարակի գյուղերը. Կարսի նահանգից՝ Զարիշատի և Աղբաբայի գավառամասերը:

Սուսուլմանների կողմից լքված գյուղերում կառավարությունը փորձում էր տեղավորել գաղթականներին, որով կլուծվեր նրանց սոցիալ-տնտեսական հարցերի մի մասը: Սակայն պետք է նշել նաև, որ գաղթականությունը դժկամությամբ էր տեղավորվում գյուղերում, հատկապես արևմտահայերը, որոնք իրենց այս տարածքներում գտնվելը համարում էին ժամանակավոր և չէին ուզում հիմնավորվել: Շատերն էլ գերադասում էին Երևանում ապրել և նպաստ ստանալ, քան տեղափոխվել ապրելու իրենց հատկացված գյուղերում: Այս առիթով 1920թ. հունիսի 21-ին Խնամատարության նախարարությունից Երևանի քաղաքային վարչությանը կարգադրում են դադարեցնել գաղթականության հացի բաշխումը, քանզի նրանք պարտավոր էին տեղափոխվել ապրելու իրենց հատկացված գյուղերում[9]:

Բնակչության ևս մի խոշոր տեղաշարժ եղավ 1920թ. ամառը, երբ հայկական ուժերը հնազանդեցրին Զանգիբասարի, Վեդիբասարի, Ղամարլուի և Շարուրի խռովարարներին: Իշխանություններն անմիջապես քայլեր ձեռնարկեցին այս տարածքներում գաղթական բնակչությանը տեղավորելու համար:

Հունիսի 28-ի դրությամբ Զանգիբասարում բնակեցված էր արդեն տասը գյուղ՝ Ռեհանլուն, Սեյիդքենդը, Ղարաղշլաղը, Սառաջալարը, Սրբատը, Ներքին և Վերին Նեջերլուները, Ենգիջան, Դոնգուզյանը, Մուղամլուն: Դոնգուզյանի վերաբնակիչները Վեդիբասարի Ղարախաչ, Բիրալու, Քեշիշվերան գյուղերից էին՝ 542 հոգի, մնացածը հիմնականում արևմտահայեր էին, ընդհանուր առմամբ՝ 2736 հոգի[10]:

Վեդիբասարում օգոստոսի 28-ի դրությամբ վերաբնակեցվել էր 15 գյուղ՝ Ավշարը, Դաշլուն, Դահնազը, Քեշիշդաղը, Սադարակը, Շիհոլուն, Բոյուք Վեդին, Չիմանքենդը, Ղարաբաղլարը, Գորովանը, Ենգիջան, Թայթանը, Աղասիբեկլուն, Ալիմամեդը, Խալիսան: Մեկ գյուղ էլ՝ Ղարալարը, անցել էր Գլխավոր Շտաբի իրավասության տակ: Շիրազլուն և Ճաթղռանը տրված էր Թիֆլիսում գտնվող գաղթականներին, որոնք սակայն օգոստոսի վերջին դեռ չէին եկել: Ընդհանուր առմամբ Վեդիբասարում վերաբնակվել էին մոտ 5500 հոգի[11]:

Սուրմալուի գավառում ևս կառավարությունը վերաբնակեցման աշխատանքներ էր իրականացնում: Այստեղ նույնպես կային բավականաչափ լքյալ գյուղեր: 1919թ. ամռանը գավառի տարածքում հաշվառվել էր 8900 հոգի արևմտահայ փախստական: Սակայն Սուրմալուի գավառում կյանքի պայման-

ները չափազանց ծանր էին: Ի հավելումն սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակին, չէին դադարում նաև ռազմական ընդհարումները: Այդ պատճառով էլ փախստականները դժկամությամբ էին տեղավորվում Սուրմալուի գյուղերում և առաջին իսկ առիթի դեպքում ցանկություն էին հայտնում հեռանալ: Այսպես 1920թ. գարնանը կառավարությունը 4 գյուղերում տեղավորել էր 2916 հոգի զաղթականներ Նուխի գավառից: Սակայն Շարուրի գրավումից անմիջապես հետո նրանք ցանկություն էին հայտնում այնտեղ տեղափոխվել: Կառավարությունը խնդրանքը չի մերժում: Բացի դրանից, Սուրմալուի գավառում 1920թ. գարնանը վերաբնակեցվել էր ևս մի քանի գյուղեր: Չարուխչի գյուղում վերաբնակվել էին 186 հոգի աղբակցիներ, Շիրաչիում՝ գանձակեցիներ: Զիլֆուղարում տեղավորվել էին Գյոքչայի և Շամախու փախստականները, իսկ Սուլթանաբադում՝ 35 տուն արևմտահայ փախստականներ: Վիճակագրության տվյալներով Սուրմալույում կային նաև 535 հոգի արևելահայ փախստականներ:

Վերաբնակեցման լայն աշխատանքներ էր գնում նաև Շարուրում: Այդ աշխատանքներն իրականացվում էր նաև Վայոց Ձորի գավառային Հողային կոմիտեի կողմից: Այստեղ հիմնականում Դարալագյազի սակավահող գյուղերից ժողովրդի մի մասին վերաբնակեցնում էին Շարուրի լքյալ գյուղերում: Դարալագյազի լքյալ գյուղերից Չիվայում վերաբնակվել էին 15 տուն թեշիշքենդցի և 24 տուն Բաշքենդից ու Օրթաքենդից: Հորսում հաստատվել էին Նախիջևանի Բաղամլու գյուղից գաղթածները[12]: Շարուրում հոկտեմբերի 28-ի դրությամբ վերաբնակվել էր մոտ 2000 հոգի: Որոշ գյուղերի վերաբնակեցումն էլ ընթացքի մեջ էր[13]:

Հողային կոմիտեները վերաբնակեցման ծրագրեր էին կազմում նաև մյուս գավառներում:

Էջմիածնի գավառում Հողային կոմիտեն հատուկ ուշադրություն է դարձնում սակավահող Ապարանի վրա, ուր հողը հազիվ էր բավարարում 10-12000 հոգու, մինչդեռ ապրում էր մոտ 25000 հոգի: Որոշվեց՝ գյուղացիության կեսին տեղափոխել Կարսի նահանգ, որի կլիման նման էր Ապարանի կլիմային և կային բավական լքյալ գյուղեր: Երեք գյուղի՝ Նորաշենի, Սաչլուի, Ղարաբուլաղի հողազուրկ գյուղացիները տեղափոխվեցին Աշտարակի լքյալ Բաբաքիշի և Քիրաշլու գյուղերը:

Նոր Բայազետի Հողային կոմիտեն որոշեց առավել խիտ բնակեցված գյուղերից բնակչության մի մասին տեղափոխել Հաջի Մուխանի և Բասարգեչարի լքյալ գյուղերը[14]:

Հողի սակավության պատճառով ուրիշ գյուղեր ևս խնդրում էին կառավարությանն իրենց տեղափոխել լքյալ գյուղեր: Լոռու Շահնազար գյուղից 127

ընտանիք խնդրում էին իրենց տեղափոխել Կարսի նահանգի Արդոս, Դայնալը, Սոգոլու և Սուբաքան գյուղերը: Լքյալ Տայնալը, Աղուզում, Քինակ, Իլանլու գյուղեր տեղափոխվելու ցանկություն են հայտնում Արթիկ և Բաբռլի գյուղերից[15]:

Բացի բնակչության ներհանրապետական տեղաշարժերից, տեղի էր ունենում արտագաղթ և ներգաղթ:

Չհաշված այս բնակիչներին, որոնք խռովություններ բարձրացնելով ի վերջո ստիպված էին լինում լքել Հայաստանը, երկրից արտագաղթելու պատճառները հիմնականում սոցիալ-տնտեսական էին: Դեռ 1918թ. սկզբին մոտ 100000 հոգի երկրից հեռացել էին Վրաստան և Հյուսիսային Կովկաս: 1919թ. վերջին Կարսի նահանգից զգալի թվով հույներ հեռացել էին Վրաստան:

1920թ. սկզբին նահանգապետ Ղորղանյանը զեկուցում է կառավարությանը, որ Կարսից մոտ 1000 հոգի թուրքեր ցանկանում են գաղթել Ադրբեջան: Այդ նուն ժամանակ Կարսում Պարսից հյուպատոսը խնդրում է թույլ տալ Աղբաբայի գավառամասին շիա-կարափափախներին տեղափոխվել Պարսկաստան: Հյուպատոսն իր այդ քայլը պատճառաբանում է բնակչության ծանր տնտեսական վիճակով: Կ. Սասունին դրան ավելացնում է, որ այդ բնակիչների գաղթելու պատճառներից է նաև իրենց սյունի-կարափափախ ազգակիցների բռնաճնշումները: Հետաքրքիր է, որ վիճակագրության փաստաթղթերում սյունի-կարափափախներին կոչում են «թուրք», իսկ շիաներին՝ «պարսիկ»: 1920թ. ամռանը մոտ 6000 հոգի կարափափախներ անցնում են Պարսկաստան[17]:

Չնայած Հայաստանի ոչ այնքան կայուն իրավիճակին, շատերն էին ցանկություն հայտնում ներգաղթել: 1920թ. գարնանը նման ցանկություն էին հայտնում Միջագետքում հավաքված ասորիներն ու եզդիները[18]:

Սուխումից 1920թ. սկզբին Հայաստան են գալիս 90 տուն հայեր, որոնց կառավարությունը տեղավորում է Սուրմալուի գավառի Սարիչոբան և Աղավեր գյուղերում: Սրանք տրապիզոնցիներ էին[19]:

Բաթումից Հայաստան եկած 172 տուն ախլաթցիներին տեղավորում են Կաղզվանի գավառի Շաբան գյուղում[20]:

Կառավարության հիմնական մտահոգություններից մեկն էլ Նուխի-Արեշի շրջանի հայերի վիճակն էր: Նրանցից մոտ 5000 հոգի փախել էին Թիֆլիս: 1919թ. հունիսին կառավարությունը որոշում է ընդունում նրանց Հայաստանի քաղաքացու վկայականներ տալու և Հայաստան տեղափոխելու մասին[21]:

Նրանց վերաբնակեցնում են էջմիածնի գավառի Քյոլանլու, Ղարխուն, Ղամարլու, Թուրքմենլու, Սուրմալուի գավառի Գոյջալու, Թոխանշալու,

Մալաքլու, Ղարաղոյունլու, Ղամարլուի Սաբունչի և այլ գյուղերում: 1920թ. ամռանը Թիֆլիսում գտնվողներին է հատկացվում նաև Շիրազլուն:

Ներգաղթողներ կային նաև Գանձակի գավառից: Այս գավառի Կոզեն գյուղից ներգաղթածներ կային Շամշադինում, իսկ 1920թ. ամռանը նաև Վեդիբասարի Գորովան գյուղում:

Կային նաև Պարսկաստանից ներգաղթածներ: 1919թ. վիճակագրության ժամանակ պարսկահայ 50 գաղթականներ են հաշվառվել Ղափանում[22]: 1920թ. ամռանը Ավշար գյուղում վերաբնակեցվածների մեջ կային նաև մակվեցիներ: 1920թ սեպտեմբերին սկսված թուրքական ներխուժումների հետևանքով կրկին տնավեր եղան Կարսի, Սուրմալուի, Ալեքսանդրապոլի տարածքների բնակչությունը: Այս պատերազմի արդյունքում ճիշտ է Հայաստանը հսկայական մարդկային և տարածքային կորուստներ ունեցավ, բայց ունեցավ նաև մեկ ձեռքբերում: Եթե 1919թ. վերջին հայերը կազմում էին երկրի բնակչության մոտ 64%-ը (ներառյալ «Չեզոք գոտին»), ապա արդեն 1922թ.-ին այդ թիվը կազմում էր մոտ 87 %: Այս փաստերով հերքվում է խորհրդային պատմագիրների այն զրպարտությունները, թե իբր Հայաստանի իշխանություններն երկրի էթնիկ միատարությունը փորձում էին ապահովել ժողովրդագրական զտման հաշվին:

Հայաստանը գրեթե էթնիկ միատարություն ձեռք է բերել տարածքային կորուստների հաշվին:

---

1. Սիմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 263:
2. ՀՀ Ազգային Արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), Ֆ201. ց1, գ167, թ 58:
3. Նույնը, թ 60:
4. ՀԱԱ Ֆ 201 ց.1, գ149 (մասII), թ 226:
5. ՀԱԱ Ֆ 203 ց.1, գ4, թթ 44-46:
6. Ռուբեն, Հայ Յեղափոխականի մը հիշատակներ, Եր., 1990, հ. 7, էջ 208:
7. է.Զոհրաբյան, Նախիջևանի հիմնահարցը և Հայաստանի դաշնակիցները, Եր., 2000, էջ 155-157:
8. Սիմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 318:
9. ՀԱԱ Ֆ205, ց.1, գ802 (մաս II), թ221:
10. ՀԱԱ Ֆ201, ց.1, գ163, թ15:
11. ՀԱԱ Ֆ201, ց.1, գ161, թ4,5:
12. ՀԱԱ Ֆ199, ց.1, գ181, թթ 2-14:
13. ՀԱԱ Ֆ203 ց.1, գ122, թ2:
14. Սիմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 456-457:
15. ՀԱԱ Ֆ201, ց.1, գ427, թթ23-62:
16. ՀԱԱ Ֆ201, ց.1, գ157, թ26:
17. ՀԱԱ Ֆ201, ց 1, գ157, թ34:
18. Սիմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 393:
19. ՀԱԱ Ֆ201, ց.1, գ732, թ2:
20. ՀԱԱ Ֆ203, ց 1, գ745, թ36:
21. ՀԱԱ Ֆ203, ց.1, գ60, թ67:
22. ՀԱԱ Ֆ127, ց.1, գ3, թ64: